

տողութիւնները՝ վերնագրով յօդուածի վերայ, խնդրումենք Արժանապատիւ Յաջորդներից, Գաւառուաց Գործակալներից եւ Հայոց Հոգեւոր ծիսական դպրոցների թեմական Տեսուչներից, որ իւրեանց պաշտոնական ճանապարհորդութեանց ժամանակ համար նոյնօրինակ տեղագրական եւ վիճակագրական նկատողութիւններ գրել եւ հասցնել Խմբագրութեանո ի հրատարակութիւն, յաւելացնելով իւրեանց նկատողութիւնների վերայ եւ իւրաքանչիւր տեղուոյ ժողովրդեան սովորութիւնները, տեղական արհեստները եւ նոցա արհեստական արտագրութիւնները, որով մեծ ծառայութիւն արած կլինին Հայրենագիտութեան եւ ժողովրդական կեանքին վերաբերեալ ներկայ գրականութեան ճիւղերին:

Ի նկատի ունելով այն ամեն յաթող միջոցները եւ յարմարութիւնները, որոնք ունին նոքա իւրեանց ճանապարհորդութեան ժամանակ, կյուսանք որ մեր այս հրաւերը չի մնալ «Ճայն բարբառոյ յանապատի:»

ՆԱՄԱԿ ԱԽԵԼՑԽԱՅՔ.

Ա, եհանձն և բարեպաշտ մահասի Ա, արդանեանց՝ որ
իւր մեծագործութիւններովն՝ յայտնի է արդէն, ինչպէս Առուսահայոց, նոյնպէս և Տաճկարնակ Ազգայնոց մեծ և երեւի մասին, չկարողանալով չափաւորել իւր արդի ազգասիրական բաղձանքն՝ ինչպէս ուրբոց Ա, արդանանց զօրավարաց անունով կառուցած եկեղեցիով, նոյնպէս և Հայազգի որր և աղքատ տղայոց ձրի գաստիարակութեան համար բացած վարժարանովն՝ հաճեցաւ Աղջկանց մի ուսումնարան ևս կառուցանել, որպէս և արդէն կառոյց նոյն իսկ Եկեղեցւոյ և ուսումնարանի պարսպաց միջին գծի վերայ, որ տարածուած է հիւսիսային թեւեն գէպի արեմուտք, ճակատը՝ ուղղակի հիւսիսին պարզած, այնպէս որ տղայոց դպրոցը՝ մի և նոյն գծին ուղղութեամբ՝ հաստատուած է՝ արեւելեան կողմը եղած ապառաժուտ դաշտաբլուրի յատակագծին վերայ. իսկ գմբեթազարդ հոյակապ Եկեղեցին, որ շինուեցաւ նոյն իսկ գաշտարլի բարձր գագաթան վերայ իւր հոգեսր զաւակունքը — Եղբայր և Քյոյր, երկու քաղցրամունջ աղաւնիք — «Ա, արդանեան» Առումնար, ու «Ծուշանեան» դպրոցը, կարծես թէ՝ իւր թեւերուն հովանիին տակն առած՝ կ'պատսպարէ, կ'ինամէ, ու կ'առաջնորդէ նոցա Քրիստոսեան ուղիղ բարոյականութեամբ՝ նաւարկելով մարդկային կենաց մրրկածուփ ծովու ալիքներէն՝ հասնել անգայթ նաւահանգիստը. և հետեւարար,

Ա, արգանայ քաջին առաքինութեանց՝ գոնէ մասնաւորներուն և եթ նախանձող Ա, արգան աղան՝ իրեւ իրաւախոհ և կատարեալ մարդ, իր-
բեւ փորձեալ, արի, և քաջ մարդ, ամեն արգելքներու զէմ կտրծու-
թեամբ պատերազմելէն վերջը՝ ի վերջոյ յաղթական փառօք և մեծ զո-
չողութեամբ՝ նոյն աղջային հաստատութիւնըն հիմնարկելէն զինի,
այս օրուան օրս ալ՝ ձեռնարկեց Աղջկանց գորոշի շինութեան և հաս-
տատութեան, (որոյ բացման իրաւանց համար արգեն ինդրամատոյց էր
եղած նորին Ա, Եհափառութեան ի Տէր հանգուցեալ երջանկայիշատակ
Կաթուզիկոսի ամենայն Հայոց Տ, Տ, Գէորգայ Պ ի.), Որովհետեւ շատ
լաւ է զիացել աշխարհը և աշխարհին բաներն ուղիղ փիլիսոփայու-
թեամբ և աշխարհագիտական գծով՝ այնպէս գեղեցիկ է կշռել, զիտել,
և այն աստիճան ուղիղ է չափել իւր գնալիք ճամրուն սահմանները, և
իւր հանգստարանի յատակագիծն ես՝ այնպէս պարզ է որոշել՝ որ ա-
ռանց մեծ ու բարակ քննութեան՝ զիտակցարար կ'երեւակայէ, որ ապա-
գային, նորա՝ (այսինքն հանգստարանի) վերայ կանգնող արձանը՝ մի
երկու կանգունէն աւելի հողի տարածութիւն չպիտի կարենայ տիրել-
և հետեարար ալ՝ իւր աշխարհային մեծութիւններէն և Ճոխութենէն՝
լոկ միայն երկք կանգուն կտաւէն աւելի ուրիշ ոչինչ չպիտի տանի այն
տեղ, Մեր այս խորհրդածութիւններէն՝ որոշ կերպով կիմացուի բարե-
րարին (Ա, արգաննեանին) ունեցած բարեպաշտ քրիստոնէական, ուսում-
նական և ազգասիրական գովելի դիտաւորութիւնն, և ոգույն ուղղու-
թիւնը, այն է՝ քաջ իմանալով, թէ մարդկային յառաջդիմութեան
սկզբնակէտը, ազգի մը վերաշնութեան և բարգաւաճման հիմունքը,
և երջանկութեան միակ սպառագոր ուսմունքն, կրթութիւնը և բարսյա-
կանութիւնն է. և թէ հետեարար ինչպէս հին դարերու՝ նոյնպէս և
այժմեան դարու մեր աղջայոց ամենամեծ և ամենազօրեղ տարերը
ևս՝ սորա են եղել, այսինքն՝ Պարոցն ու Եկեղեցն, ինքն ես՝ ազգա-
սիրական առատաձեռնութեամբ որոշեց, դոքա թողնել աշխարհիս
մէջ՝ իւր ազգին յիշատակ, և դոքա անմահացուցնել ինչպէս իւր ա-
ռանը, նոյնպէս և իւր բարեյիշատակ սերնդոց. և այսպիսի խոհական
և վսեմ ընտրութեամբ՝ բարերար Հիմնադիրը կրցանկայ, որ իւր բա-
րեիքը վայելողները, թէ աշակերտք և թէ աշակերտու հիք՝ ուսման և
կրթութեան հետ մէկտեղ՝ նաև քրիստոնէական բարեպաշտ գաստիա-
րակութիւն ուսանին, որ հիմն է՝ ուղիղ բարսյականութեան. ասոր
համար՝ վարժարանին աշակերտաները՝ բացի հասարակ օրէն, նաև ամեն
կիւրակի և առն օրեր՝ առաւոտ և իրիկուն եկեղեցի գնալէն Ետքը՝ կեր-
թան ուսումնարան. և այնտեղ մի ժամու չափ կամ աւելի՝ քրիստո-
նէական հաւատոց, բարեպաշտութեան, և բարի վարուց վերայ՝ իրաւ-
ակլսեն իրենց վարժապետներէն, Ա՛վ չի ցանկալ, որ այսպիսի աստու-
ծահաճոյ և աղջօգուտ բարեաց հետի ողները ըստ կարի բազմաթիւ լի-
նէին Հայոց ազգի մէջ, Աւ վերջապէս, վերդյոգրեալ ։ Ըստ շանեան ։ ու-

սումեարանի վերաբերութեամբ՝ Աւարդանեանցի սրտին այն միայն և եթ անփարատելի ցաւ եղաւ, որ դեռ ևս նոյն գպրոցի բացման հրամանը Ա. Եհափառէն չստացած՝ մահը վրայ հասաւ, և յափշտակեց այնպիսի անզուզական Հօր մը — ազգային վեհ բարերարի մը պատուական և փառաւոր կեանքը, որդյ քաջալերական և օրհնառաք կոնդակներով, հայրական ցոյցերով՝ ամեն ժամ կը միմիմարուէր և կարիանայր՝ ևս քան զես հետեւիլ և միջամուխ լինել ազգասիրական գործքերու. Նա մանաւանդ և կատարելով Կորին Վ. Եհափառութեան բարի բարի առաջարկութիւններն, որք կ'վերաբերեին ազգային բարոյական այլ և այլ հաստատութեանց.

Ա. Բ. Ա. Յ.

*Եերկայ Մեծի պահոց օրերում ժողովրդեանը Ա. Աւետարանի խրատներով և քարոզներով հոգեորապէս միսիմարելու համար նշանակուեցան Ա. Էջմիածնայ Տաճարի մէջ քարոզողներ — կիւրակէի երեկուահան Գեր. Սերովը Եպիսկոպոս Երարատեանց, բ. կիւրակէի Գեր. Մեսրովը Եպիսկոպոս Սմբատեանց, բ. կիւրակէի Գեր. Գրիգոր Եպիսկոպոս Ըղափիրեանց, բ. կիւրակէի Գեր. Երեմիա Եպիսկոպոս Գալլուտեան, բ. կիւրակէի Բարեշն. Աիւրեղ Ա. արդապետ Սրապեան և Ա. կիւրակէի բարեշն. Սարգիս Վ. արդապետ Տ. Գասպարեան.

Բաց յայսմանէ բարեշն. Աիւրեղ Վ. արդապետն ամենայն շաբաթ երեկոյեան քարոզումէ և Սամաղար զիւղի եկեղեցում. իսկ բարեշն. Սահակ Վ. արդապետ Բաղդասարեանց Մեծի պահոց ամենայն կիւրակէ առաւտեան պիտի քարոզէ Վ. աղարշապատայ Եկեղեցում մինչեւ Ա. Յարութեան օրը.

*Աղբիւր « ամսագրի մէջ տպուած հայ լրագրների, շաբաթաթերթերի և ամսաթերթերի յայտարարութեանց շաբթում տպուած էր և Ա. Էջմիածնում հրատարակուող « Արարատ » ամսագրի յայտարարութիւնը, որի մէջ սպրդած էր մի սխալ և որը հարկ ենք համարում ուղղել, այն է՝ տարեկան բաժեանորդագինը փոխանակ չեւ (4) բուրլու՝ նշանակուած է Երեւ (3) բուրլի».

Ա. Յ. Ե. Ա. Յ. Բ.

Անդրեաբեր հորդէւ. Վ. երջին ժամանակներս Ամերիկայում գտնուեցաւ արուեստական անձրև բերելու եղանակը. Գա այսպէս է լինում. — առ-